ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **11/12/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/4
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Մելինե Գասպարյանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը, Արսեն Հարությունյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 11-ի հինգերորդ նստաշրջանի արտահերթ չորրորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքի կարիքների համար հայտարարված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.
2) Աբովյան համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին.
3) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը,

հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.
5) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի 18/10 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
6) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0307-0022 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
7) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0308-0036 կադաստրային ծածկագրով 0.08 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Առինջ գյուղի Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի 11/1 հասցեում գտնվող հողամասը Բենիամին Կամսարյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 189-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 58-րդ կետի և հիմք ընդունելով «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 9 արձանագրությունը, Աբովյան համայնքի ղեկավարի խորհրդականի զեկուցագիրը (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N Ք-8114)՝ Աբովյան համայնքի ավագանին
ո ր ո շ ու մ է.
1. Աբովյան համայնքի կարիքների համար գույքագրման ծառայություններ ձեռք բերելու նպատակով, «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 190-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքում 2024 թվականին սկսել մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտները:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն 16-ին տարին լրացած համայնքի յուրաքանչյուր բնակիչ՝ ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:
4. Մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեում (ֆոնդային մասում) որպես ֆինանսավորման մասնաբաժին նախատեսել տվյալ ծրագրի համար հայցվող պետական ֆինանսավորման գումարի 20 տոկոսը:
5. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ ներառել համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանում, բյուջեում և 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում.
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը.
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 191-Ա/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 700 000 (յոթ հարյուր հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Նախագծի վերաբերյալ ծավալվեց քննարկում:
Որոշվեց հարցը տեղափոխել հաջորդ նիստի քննարկմանը:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0 Չի քվեարկել-24

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու դեպքում սահմանել հավելավճար՝ իրենց պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Նախագծի վերաբերյալ ծավալվեց քննարկում:
Որոշվեց հարցը տեղափոխել հաջորդ նիստի քննարկմանը:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-0 Չի քվեարկել-24

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԻ 18/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերի,

«Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ և 64-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 09-ի N 1/փ-386 դրական եզրակացությունը և հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ի N Ք-7581), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Փոխել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի գոստոսի 04-ի N 04082022-07-0078 վկայական) Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի 18/10 հասցեում գտնվող 07-002-0040-0309 կադաստրային ծածկագրով 0.04189 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողամասի նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ նույնաբովանդակ հարցեր են:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 192-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0307-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Զարզանդ Պողոսյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ի N Ք-7597), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Զարզանդ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հոկտեմբերի 24-ի N 24102023-07-0121 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0307-0022 կադաստրային ծածկագրով 0.31 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 193-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0308-0036 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.08 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված հավելված 1-ի 7-րդ կետի, հաշվի առնելով Ռուշան Դավթյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հունիսի 26-ի N Ք-3797) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 02-ի N 109 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Ռուշան Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2003 թվականի հոկտեմբերի 30-ի N 1425461 վկայական, Քաղաքաշինության կոմիտեի 2023 թվականի օգոստոսի 17-ի N ԱՍ/14.1/24369-2023 գրություն) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0308-0036 կադաստրային ծածկագրով 0.08 հեկտար մակերեսով հողամասի (այլ հողատեսք) նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 194-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Մ. ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԵՆԻԱՄԻՆ ԿԱՄՍԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն և N 193-Ն որոշումների և հիմք ընդունելով Բենիամին Կամսարյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 08-ի N Ք-7258), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Բենիամին Յուրիի Կամսարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 27-ի N 08082023-07-0052 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի 11 հասցեում գտնվող 07-011-0346-0026 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 1000.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի նոյեմբերի 03-ի N 22112023-07-0092 վկայական) Աբովյան համայնքի Առինջ գյուղի Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոցի 11/1 հասցեում գտնվող 07-011-0346-0224 կադաստրային ծածկագրով 143.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-011-0346-0026 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Բենիամին Յուրիի Կամսարյանին:

2. Բենիամին Կամսարյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 1 503 474 (մեկ միլիոն հինգ հարյուր երեք հազար չորս հարյուր յոթանասունչորս) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Բենիամին Կամսարյանի կողմից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բենիամին Կամսարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 195-Ա/

Ավագանու անդամներ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՁԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՁԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ